

և խմացական ապրումներուն, առինքնած է մեղաւորն ու հիւանդը, անոնց՝ անսպառ կորով եւ մխիթարութիւն ներշնչելով:

Նարեկացին այս տեսակէտով, յաջողած է հայ ժողովուրդին համար դադարաւ կան լուրտ մը կերտել, ուրտեղէն բարձրացող «ողբածայն հեծեծանքներուն եւ հառաչանքներուն» հետ, ուր մոլոր «կեանքի բուրվառէն» դուրս կը միայն «սասանած հոգիներու իղձերուն խունկը ճենճերոտ»:

Բայց պէտք է խոստովանիլ թէ Նարեկացին կերտած այս փառքին, մեծապէս նպաստած է իր օրերուն, եւ յաջորդ դարերու ընթացքին, բժշկութեան վիճակուած լճացումը:

Բժշկութիւնը այն չէր ինչ որ է ներկայիս, խարխուլ եւ սնուի տուեալներու վրէժով:

Բժշկական արուեստի հիմունք

Եւ խիստ փորձառու հնարամտութեամբ՝

Անխախտ կեանքի պատճառը դո՛ւն ես, Տէ՛ր Յիսուս Բրիստոս,

Աստուած՝ իմանալի եւ անտեսանելի համայն գոյութեանց:

Դու չես կարօտիր ըսպեղանիի՝

Պատրաստելու համար պատասխան հոգւոյս վերքերուն,

Ո՛չ ժամանակի եւ ո՛չ միջնորդի, եւ ո՛չ օրէ օր ձրգձրգումներու:

Ո՛չ փոփոխական դեղատրուքեանց,

Ո՛չ հատումի, ո՛չ խարումի, ո՛չ նշարակումի՝

Նըման երկրաւոր դարմանումներու՝

Որոնք ենթակայ են միշտ վրիպանքի եւ ամենախալ վարանումներու:

Սակայն քեզ՝ որ արարիչն ես հոգիներուն եւ մարմիններուն՝

Ամէն բան պայծառ է լոյսի նըման, ամէն ինչ յայտնի,

Ամէն ինչ գրուած, ամէն բան դիւրին, համայն հնարաւոր:

Խորհուրդդ է գլխաւորուած, խոստումըդ լցուած, կամքըդ կատարուած:

— ԲԱՆ ԽԳ —

Հաւատքով դեղուն այդ դարուն, եւ աւոր յաջորդներուն ընթացքին, դիւրահաղ կընալի կը դառնայ թէ ինչո՞ւ մարդիկ երկնային աջակցութիւնն ու զօրութիւնը կը գերադասէին ամէն բանէ վեր:

Այսօր, աստուած կոչեցեալին դերը այնքան մեծ է բժշկական մարդին մէջ, որ այլեւս անոր նպատակը կարելի չէ արհամարհել, բայց ո՛րքան ալ բժշկութիւնը ճո-

րայ հիմնուած այդ դիտութիւնը, կը սահմանափակուէր՝ խարումի, նշարակումի, լուծումի, դրեխի եւ չնաչխարհիկ խառնուրդներով պատրաստուած դեղերու կիրարկման մէջ: Ասոնցմէ հիւանդը ո՛չ միայն չէր օգտուեր, այլ յաճախ առողջութիւնն ու կեանքն ալ վրայ կու տար:

Շատ պարզ է, որ այդ պայմաններուն մէջ, հիւանդը նախընտրութիւն կու տար գերբնականին կառչիլ, քան թէ մարդկային «ամենախալ վարանումներուն եւ վրիպանքներուն» զոհը դառնալ:

Նարեկացին այս հարցն ալ հանգամանօրէն շօշափելով, բժշկութեան արժէքին մասին իր վճիռը հետեւեալ կերպով կը բանաձեւէ.

Բժշկական արուեստի հիմունք

Եւ խիստ փորձառու հնարամտութեամբ՝

Անխախտ կեանքի պատճառը դո՛ւն ես, Տէ՛ր Յիսուս Բրիստոս,

Աստուած՝ իմանալի եւ անտեսանելի համայն գոյութեանց:

Դու չես կարօտիր ըսպեղանիի՝

Պատրաստելու համար պատասխան հոգւոյս վերքերուն,

Ո՛չ ժամանակի եւ ո՛չ միջնորդի, եւ ո՛չ օրէ օր ձրգձրգումներու:

Ո՛չ փոփոխական դեղատրուքեանց,

Ո՛չ հատումի, ո՛չ խարումի, ո՛չ նշարակումի՝

Նըման երկրաւոր դարմանումներու՝

Որոնք ենթակայ են միշտ վրիպանքի եւ ամենախալ վարանումներու:

Սակայն քեզ՝ որ արարիչն ես հոգիներուն եւ մարմիններուն՝

Ամէն բան պայծառ է լոյսի նըման, ամէն ինչ յայտնի,

Ամէն ինչ գրուած, ամէն բան դիւրին, համայն հնարաւոր:

Խորհուրդդ է գլխաւորուած, խոստումըդ լցուած, կամքըդ կատարուած:

— ԲԱՆ ԽԳ —

Խանայ ու յառաջդիմէ, ինչքան ալ հրաշագործ բեկիսիլիներով ողողուի հրապարակը, քանի որ ծերանալ կայ ու մեռնիլ, Նարեկը հայ մարդուն համար պիտի չարունակէ միայն հոգեպարար սրբութիւն մը, ու երբեք պիտի չդադրի անոր լուրտը հանդիսանալէ:

Իւրաքանչիւր անգամին որ այլեւս բըժիշկին տեսիլք ու անելիք չի մնար, ու իր

մահիճին մէջ փոռած հիւանդը դատապարտուած է ասդիականէն անդիական անցնիլ, ան որպէսզի կարենայ կեանքին վերջին հրաժեշտը տալ, յենարանի մը

պէտք ունի: Հայուն համար, այդ յենարանը՝ Նարեկացին խնկաբոյր մատեանն է:

ՏԵՔԹ. Պ. ՄԻՍԱԲԵԱՆ

GIOSUÈ FAGHERAZZI-էն

ՀԱՄԱՐԱՆ

Անտառին մէջ մենաւորիկ,
Ուր փեկոններ կ'իշխեն խարտեաշ,
Ու շոճիներ մշտադալար,
Մերթ խոյս տալով ես ամբոխէն
Կ'առանձնանամ լոկ անձնատուր մուսային՝
Կին մ'անձանօթ պըճըղաւոր հանդերձով,
Աչքը կապուած, ինձ երեցաւ յեղակարծ
Մամուռին վրայ հեշտափափուկ,
Զոր խնդազին ողջունեցի, ըսելով.
«Յաջողութիւն, ո՛վ Դիցուհի».
Ու բախտաւոր նախ՝ ես որ քեզ տեսնելու
Արժանացայ:

Ու նէ գըլուխը խոնարհած մեղմօրէն.
«Մի՛ խաբուիր դուն, պատասխանեց,
Կրտսեր քոյրիկն եմ ես անոր»:
«Համբաւն ես դուն հարցուցի դեռ յուսախաբ,
Եւ ինչո՞ւ չես կըրեր ուսիդ վրայ թեւեր,
Մահկանացուի խոնարհ գործերն
Արագօրէն բաղդատելու, կռուելու»:

Պատասխանեց նէ համակամ.
«Երբ արժանիքն էր միակ պայման,
Ես թեւաւոր կը շրջէի.
Արդ, ուրիշներ ըստանձնած են
Հոգը տալու պսակն ու դափնի.
Օրագիրներն ունին հիմա այդ պաշտօնն»:

ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆԸ

Իրենց խաղին հետամուտ, ժիր մանուկներ
Կ'աղմկեն տունն համօրէն մեծ շառաշով.
Եւսած ոմանք պատըզգամէն գէպի դուրս,
Պըղպըջակներ կ'ուռեցնեն օճառով:

Ուրիշներ վարն, երեսներով կարմրաւառ,
Ծիրանեգոյն այն գունտերուն կը սպասեն,
Ու բընըւած հագիւ, իսկոյն կը ցընդին,
Իրենց գոյնին ու ձեւին մէջ կարճատեւ:

Կը ցնդի այսպէս պատրանքն: Ո՛վ մանուկներ,
Այդ գունտին է հանգոյն, դիտուած հեռուէն,
Իտէալն ալ մեր երկրաւոր այս կեանքին,

Փայլուն, շքեղ, միանգամայն եւ ունայն,
Ու իբրեւ մի կրկներեւոյթ խուսափուկ,
Առաջին իսկ հպումին ձեռքիդ մէջ կ'հալի:

ԼՈՐԻՍ (1)

Փոթորկահար որպէս ծաղիկ մը քնքուշ՝
Անշարժ ինկար հոն արտերուն վրայ խոպան,
Հայցելով զո՛ւր, թանձր ու սեւ գիշերէն,
Կաթիլ մը ցօղ դէմքիդ վըրայ գունաթափ:

Ու հայցելով ի զո՛ւր՝ լըսել ձայնն հեշտին
Մօրքդ՝ որպէս թռչնիկն որբուկ իրիկունն,
Յետին համբոյրն իր խնդրեցիր՝ անարիւն
Այտերուդ վրայ եւ ձեռքերուդ մոմատիպ:

Յաւերժական մոռացումի քունն այսպէս
Պատեց ըզքեզ, արիւնիդ մէջ թաթաւուն,
Շրթներդ երբոր, դիմազըծիդ պէս տըժգոյն՝

Կ'ըսէին դեռ կարծես. Ի՞նչ փնտս ըրի ես:
Ու թողով այս կեանքն իր անոյշ ժըպիտով,
«Ինչպէս որ ես, Տէ՛րն ալ ներէ՛ թող ձեզի»:

Թրգմ. Հ. Մ. Ճ.

(1) Լորիս, անունն է տասնեակամեայ պատանի մը՝ որ միջազգային երկրորդ պատերազմին, գերմանացի զինուորիկներէն սպաննուած է 1944-ին: